ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 964-Ա

«ՋԵՐՄԻԿ ԱՆԿՅՈՒՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՋԵՐՄԻԿ ԱՆԿՅՈՒՆ» ՓՈՔՐ ԽՄԲԱՅԻՆ ՏՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերը՝

1. Բարեգործական որակել «Ջերմիկ անկյուն» հիմնադրամի կողմից իրականացվող՝ 5,928,251 դրամ արժողությամբ «Ջերմիկ անկյուն» փոքր խմբային տներ» ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ «Ջերմիկ անկյուն» հիմնադրամի (ՀՎՀՀ՝ 01242562) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության («ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության) (ՀՎՀՀ՝ 00046317) հետ 2013 թվականի հուլիսի 7-ին կնքված՝ N 012.08.13. 0661 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2024 թվականի հունվարի 8-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում գազի մատակարարում՝ 1,197,935 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության (ՀՎՀՀ՝ 01520882) հետ 2021 թվականի հունիսի 7-ին կնքված՝ N 7262051 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2024 թվականի հունվարի 8-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի մատակարարում՝ 483,600 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Տելեկոմ Արմենիա» բաց բաժնետիրական ընկերության («ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերության) (ՀՎՀՀ՝ 02500052) հետ 2009 թվականի փետրվարի 20-ին կնքված՝ N 20/02.2009 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2024 թվականի հունվարի 8-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 48,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության (ՀՎՀՀ՝ 02655115) հետ 2017 թվականի նոյեմբերի 25-ին կնքված՝ N 01-0017-2 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2024 թվականի հունվարի 8-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցում՝ 184,342 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) «ԷՅ-Ի-ՋԻ-ՍԵՐՎԻՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (ՀՎՀՀ՝ 00930884) հետ 2021 թվականի հոկտեմբերի 7-ին կնքված՝ N Կ 01-0184 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2024 թվականի հունվարի 8-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում գազասպառման կենցաղային համակարգի տեխնիկական սպասարկման և հրահանգավորման ծառայությունների մատուցում՝ 21,866 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

6) «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության (ՀՎՀՀ՝ 00046317) հետ 2018 թվականի հունիսի 21-ին կնքված՝ N 051061812265 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2024 թվականի հունվարի 8-ից

մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում գազի մատակարարում՝ 1,077,750 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

7) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության (ՀՎՀՀ՝ 01520882) հետ 2018 թվականի հունիսի 28-ին կնքված՝ N 0227445 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2024 թվականի հունվարի 8-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի մատակարարում՝ 323,133 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

8) «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության (ՀՎՀՀ՝ 02655115) հետ 2018 թվականի դեկտեմբերի 10-ին կնքված՝ N 7-188-0-0-40 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2024 թվականի հունվարի 8-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցում՝ 142,516 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

9) «ԷՅ-Ի-ՋԻ-ՍԵՐՎԻՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (ՀՎՀՀ՝ 00930884) հետ 2021 թվականի հոկտեմբերի 26-ին կնքված՝ N Կ 06-0584 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2024 թվականի հունվարի 8-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում գազասպառման կենցաղային համակարգի տեխնիկական սպասարկման և հրահանգավորման ծառայությունների մատուցում՝ 21,865 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

10) «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության (ՀՎՀՀ՝ 00046317) հետ 2021 թվականի հունիսի 21-ին կնքված՝ N 018.06.21.0661/1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2024 թվականի հունվարի 8-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում գազի մատակարարում՝ 1,077,750 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

11) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության (ՀՎՀՀ՝ 01520882) հետ 2020 թվականի հունիսի 26-ին կնքված՝ N 7020570

պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2024 թվականի հունվարի 8-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի մատակարարում՝ 483,600 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

12) «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության (ՀՎՀՀ՝ 02655115) հետ 2020 թվականի նոյեմբերի 18-ին կնքված՝ N 33-1091-0-23-1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2024 թվականի հունվարի 8-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցում՝ 142,516 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

13) «ԷՅ-Ի-ՋԻ-ՍԵՐՎԻՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (ՀՎՀՀ՝ 00930884) հետ 2021 թվականի հունիսի 2-ին կնքված՝ N Կ 01-2143 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2024 թվականի հունվարի 8-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում գազասպառման կենցաղային համակարգի տեխնիկական սպասարկման և հրահանգավորման ծառայությունների մատուցում՝ 23,378 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

14) «Քրոու ընդ Ասատրյանս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (ՀՎՀՀ՝ 02618043) հետ 2023 թվականի դեկտեմբերի 7-ին կնքված՝ N AM-AS-23-108 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2023 թվականի ֆինանսական տարվա աուդիտորական ծառայությունների մատուցում՝ 700,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Ջերմիկ անկյուն» հիմնադրամին՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակ-

ներում կազմակերպության կողմից կատարված աշխատանքների, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

29.12.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ